**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ**
**ՎԱՐԴԱԶՈՐԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ**

1417 ՀՀ Գեղարքունիքի մարզ, գյուղ Վարդաձոր հեռ. /+374/091550059

,, 11 ,, Ապրիլի 2013թ. N: 058

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

Կից ներկայացվում է Վարդաձորի գյուղապետի 2013թ.-ի ապրիլի 8-ի թիվ 10, 11, 12 և 13 որոշումները:

Հարգանքներով՝

Վարդաձորի գյուղապետ՝ Ռ.Սիրականյան

...քունիքի մարզպետարան
...ԱԿՆԵՐԻ ԲԱԺԻՆ
Մուտք թիվ 2273-13
15 — 04 19/3թ.

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱԶՈՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Որոշում թիվ 12

08-ը Ապրիլի 2013թ. գ. Վարդաձոր

Վարդաձոր գյուղի 35-րդ փողոցի 1-ին փակուղի թիվ 1 հասցեի 05-084-062-006 ծածկագրով առանձնատան, կից հողամասի և շենք շինությունների նկատմամբ Գուրգեն Ավետիսի Շառոյանի գույքային իրավունքները վերականգնելու մասին:

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է 1970 թվականին, հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64 հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերի պահանջներին, ընդգրկված չէ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նշված տարածքներում: Ղեկավարվելով 2005թ. հասցեների գրանցման մասին ՀՀ կառավարության 2387-Ն որոշման պահանջներով.

**Որոշում եմ՝**

1. Վերականգնել վերը նշված հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Գուրգեն Շառոյանի /ծնվ. 1953թ./, Թերեզա Աղաբեկի Շառոյանի /ծնվ. 1957թ./, Տարոն Գուրգենի Շառոյանի /ծնվ. 1980թ./, Արտավազդ Գուրգենի Շառոյանի /ծնվ. 1982թ./ և Տիգրան Գուրգենի Շառոյանի /ծնվ. 1984թ./ հողօգտագործման իրավունքը, բնակելի տան զբաղեցրած տարածքի և սպասարկման համար անհրաժեշտ 0.129 հա հողամասի և դրա վրա կառուցված 240քմ առանձնատան ու շենք շինությունների նկատմամբ:
2. Շենք շինությունների մակերեսները ենթակա չեն ճշտման ԱԳԿ Մարտունու տարածքային ստորաբաժանման կողմից:
3. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի քաղաքաշինության մասնագետի կողմից տրված հատակագծով:
4. Առանձնատանը տրամադրել 35-րդ փողոց, 1-ին փակուղի թիվ 1 հասցեն:
5. Առաջարկել ԱԳԿ Գեղարքունիքի տարածքային ստորաբաժանմանը գրանցել Գուրգեն Շառոյանի սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի և շենք շինությունների նկատմամբ և տրամադրել սեփականության իրավունքի գրանցման վկայական:
6. Սույն վորոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Վարդաձորի գյուղապետ՝ Ռ. Սիրականյան

## ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱՁՈՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

# Որոշում թիվ 11

08-ը Ապրիլի 2013թ. գ. Վարդաձոր

Համայնքային ծառայության ատեստավորման նոր հանձնաժողով ձևավորելու մասին:

Նկատի ունենալով, որ համայնքում անցկացվել են ՏԻՄ ընտրություններ, առաջնորդվելով «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասով և հաշվի առնելով ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի 06.02.2013թ. N Աշ-01-51 գրությունը.

**Որոշում եմ՝**

1. Կազմավորել համայնքային ծառայության ատեստավորման հանձնաժողով, հետևյալ կազմով՝
1) Սիրականյան Ռոբերտ, համայնքի ղեկավար, հանձնաժողովի նախագահ,
2) Ավետիսյան Մաքսիմ, ավագանու անդամ, հանձնաժողովի նախագահի տեղակալ,
3) Հայրապետյան Գուլվարդ, ավագանու անդամ, հանձնաժողովի անդամ,
4) Սիրականյան Նորայր, ավագանու անդամ, հանձնաժողովի անդամ,
5) Ասատրյան Իվան, մարզպետարանի ներկայացուցիչ, հանձնաժողովի անդամ,
6) Օհանյան Հրանտ, մարզպետարանի ներկայացուցիչ, հանձնաժողովի անդամ,
7) Ղազարյան Սերգեյ, մարզպետարանի ներկայացուցիչ, հանձնաժողովի անդամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Վարդաձորի գյուղապետ Ռ. Սիրականյան

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱՁՈՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

# Որոշում թիվ 10

08-ը Ապրիլի 2013թ. գ. Վարդաձոր

Համայնքային ծառայության մրցութային նոր հանձնաժողով ձևավորելու մասին:

Նկատի ունենալով, որ համայնքում անցկացվել են ՏԻՄ ընտրություններ, առաջնորդվելով «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասով և հաշվի առնելով ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի 06.02.2013թ. N Ա2-01-51 գրությունը.

**Որոշում եմ՝**

1. Կազմավորել համայնքային ծառայության մրցութային հանձնաժողով, հետևյալ կազմով՝

1) Սիրականյան Ռոբերտ, համայնքի ղեկավար, հանձնաժողովի նախագահ,
2) Ավեիսյան Մաքսիմ, ավագանու անդամ, հանձնաժողովի նախագահի տեղակալ,
3) Հայրապետյան Գուլվարդ, ավագանու անդամ, հանձնաժողովի անդամ,
4) Սիրականյան Նորայր, ավագանու անդամ, հանձնաժողովի անդամ,
5) Ասատրյան Իվան, մարզպետարանի ներկայացուցիչ, հանձնաժողովի անդամ,
6) Օհանյան Հրանտ, մարզպետարանի ներկայացուցիչ, հանձնաժողովի անդամ,
7) Ղազարյան Սերգեյ, մարզպետարանի ներկայացուցիչ, հանձնաժողովի անդամ:

2. Սույն վորոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Վարդաձորի գյուղապետ Ռ. Սիրականյան

## ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱԶՈՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

Որոշում թիվ 13

08-ը Ապրիլի 2013թ. գ. Վարդաձոր

Համայնքի ծածկագիր 05-084-013-013 հողատարածքը հասցեավորելու մասին.

Համաձայն ՀՀ Կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման և Վարդաձոր համայնքի ավագանու 2006թ. օգոստոսի 30-ի թիվ 9.1 որոշման.

**Որոշում եմ՝**

1. Հասցեավորել համայնքի տարածքի, ծածկագիր 05-084-013-013, 0.02հա հողատարածքը /նախկին առևտրի տաղավար/ Ալաշկերտի փողոց թիվ 8/1:
6. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Վարդաձորի գյուղապետ՝ Ռ. Սիրականյան